ՄԱՏԹԷՈՍ ՈՒՌՀԱՑԵՑԻ. ՅԵՐՈՒՍԱՂԷՄ

1869 ՄԱՍՆ Ա. ՅԵՐԵՍ 3, 4, 5։

ՅՕԳ. Է. Լ Զ. ԳՐԷ

«Յայսմ ամի 961-962. Հայոց ՆԺ . . . ժողովեցան ամենայն իշխանք Հայոց և մարզպետական զունդն զօրաց 45 հազար զինուորք առ Անանիա Հայրապետն վասն օծանելոյ զԱշոտ Գագկայ ի թագաւորութիւն տանն Հայոց. առ որ կոչեցին ի հանդէս օծմանն զՅովհաննէս Կաթուղիկոսն Աղուանից և 40 եպիսկոպոսունք ընդ նմա, նաեւ զմեծաշուք թագաւորն Աղուանից Փիլիպպոս՝ որդի Գօշագդակայ որդւոյ Վաչագանայ, որք էին թագաւորք Աղուանից։ Եւ յայնմ աւուր (մայիսի 11.) եղեւ ժողով ահագին մեծ ի քաղաքն Անի, որ էր թագաւորանիստ քաղաքն Հայոց։ Եւ նստաւ Աշոտ ի գահոյս առաջին թագաւորացն Հայոց, և լինէր ուրախութիւն մեծ ամենայն տանն Հայոց։

« . . . Եւ յայնժամ զթագաւորն Աղուանից Փիլիպպէ և զԿաթուղիկոսն Տէր Յովհաննէս, զեպիսկոպոսունս և զօրսն՝ որ եկին զհետ թագաւորին և հայրապետին՝ յուղարկեցին մեծամեծ տրօք և սիրով յաչխարհն Աղուանից . . " եւայլն։

Յերես 20 — Յօդ. ԺԴ. Յայնժամ (յամին 972-973. ՆԻԱ) ամենայն թագաւորազունք Հայոց, ազատք և իշխանք մեծամեծք աշխարհաց տանն արեւելից ժողով արարին առ թագաւորն Հայոց՝ Աշոտ Բագրատունի, թագաւորն Կապանին Փիլիպէ, և թագաւորն Աղուանից Գուրգէն Արաս Կարուց տէրն, և Սենեքերիմ Վասպուրականայ տէրն, և Գուրգէն Անձեւացեաց տէրն, և բովանդակ ամենայն տունն Սասանու, և բանակ հարեալ ի Հաբքայ գաւառին արք իբրեւ ութսուն հազար . . ։

40) — Յօդ. Ի. «Յամին 976-977 (ՆԻԵ.) Յետ Անանիայի՝ ձեռնադրեցին յաթոռ Կաթուղիկոսութեան ամենայն Հայոց զլաւն ի բնաւիցս զերանելին զՎահան, և ժողովոյն գլուխ էր Կաթուղիկոսն Աղուանից Տէր Յովհաննէս . . և նստաւ Տէր